

I

ՄՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ժ. Ա. Մեն-Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» աշխատության երկրորդ հատորը հիմնականում վերաբերում է Մտեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Միսական» երկի քննությանը ու վերջինիս գրաբար ու ֆրանսերեն թարգմանության գույադիր հրատարակմանը¹:

Մեն-Մարտենի այս աշխատությունը բաղկացած է մի քանի մասերից՝ ա) «Մյունիքի հովվապետ Մտեփանոս Օրբելյանի կյանքը և գործերը» («De la vie et des écrits d'Orpélien Orpélian, archevêque de Siouanie») ², բ) «Քննախոսություն Օրբելյանների ընտանիքի ծագման և Հայաստանում ու Վրաստանում հաստատված բազում ուրիշ չինական գաղթաբնակների մասին» («Dissertation sur l'origine de la famille des Orpélians, et de plusieurs autres colonies Chinoises») ³, գ) «Պատմություն Օրբելեանց» («Histoire des Orpélians») ⁴, դ) «Օրբելյանների պատմության ծանոթագրությունները» («Notes sur l'Histoire des Orpélians») ⁵:

Միջնադարյան հայ ժողովրդի պատմության, ինչպես նաև մատենագրության մասնագետները, որոնք ծանոթ են Մտ. Օրբելյանի «Մյունիքի պատմություն» մեծարժեք գրքի ամբողջական բնագրին, հեշտությամբ կնկատեն, որ Մեն-Մարտենի ձեռքի տակ եղած ձեռագիրը խիստ թերի է, և այն կազմում է Օրբելյանի երկի մի փոքր մասը միայն:

Մտ. Օրբելյանի «Մյունիքի պատմության» աշխարհաբար թարգմանությունը, որն իրականացրել է գրաբարի փայլուն գիտակ Աշոտ Արսենի Աբրահամյանը, ցարդ ամենամբողջականն է, այդ պատճառով էլ համեմատությունները Մեն-Մարտենի թարգմանության հետ կկատարենք ըստ վերոհիշյալ աշխարհաբար ընտիր թարգմանության. «Գալով ներկա աշխարհաբար թարգմանության հանգամանքներին՝ պետք է խոստովանենք, որ շատ վաղուց, դեռ մեր ուսումնասիրության տարիներից, զարմանքով ու ավստասանքով էինք զգում այս չափազանց արժեքավոր բնագրի թարգմանության բացը: Այն սիրով հանձն առանք և գլուխ բերեցինք ծանր աշխատանքով ու, մանավանդ, շատ կարևոր ժամանակի ծախսումով: Հատուցումը կլինի այն, որ մեր օրերի հետաքրքրասեր ընթերցողը նրանից կօգտվի իրեն հասկանալի լեզվով:

¹ Sté J. A. S a i n t - M a r t i n. Mémoires historique et géographique sur l'Arménie, t. II, Paris, 1819, pp. 1-300.

² Նույն տեղում, էջ 1-14:

³ Նույն տեղում, էջ 15-55:

⁴ Նույն տեղում, էջ 56-175:

⁵ Նույն տեղում, էջ 176-300:

Ասացինք, որ գիտական-համեմատական բնագիրը դեռ չկա: Թարգմանության համար հիմք ենք ընդունել փարիզյան և մոսկովյան հրատարակությունները միաժամանակ»⁶, – գրել է Ա. Ա. Աբրահամյանը:

Սեն-Մարտենի թարգմանությունն իրականում սկսվում է Ստ. Օրբելյանի պատմության ԿԶ գլխից: Ֆրանսիացի հայագետն այն համարում է գլուխ Ա: Վերնագիրն է՝ «Յաղագս նախարարութեան Օրբելեանց. եթէ ուստի՞ էին, և որպէս, և վասն գալոյ նոցա յաշխարհն Վրաց և վասն բազում բանից և գործոց գրոյցք յոլովք»⁷: Վերոհիշյալ գլուխը սկիզբ է առնում Հայոց աշխարհի և Վրաստանի նահապետության ժամանակներից, երբ նախնի ցեղապետ Թորգոմն իր ութ քաջ ու հսկայակերպ որդիներից ավագագույնին՝ Հայկին, տալիս է Հայաստանը՝ իր բոլոր սահմաններով, իսկ հյուսիսային կողմի անտառոտ աշխարհը՝ Քարթլոսին՝ մյուս եղբայրների հետ միասին:

Ֆրանսերեն առաջին թարգմանությունն ավարտվում է հենց ԿԶ գլխով, որից պակասում է Ստ. Օրբելյանի հիշատակարանը, որում պատմիչը հավաստիացնում է, թե ինքն իր տոհմի մասին գրել է ճշգրիտ պատմություն՝ առանց չափազանցությունների ու հորինվածքի. այն, ինչն իր աչքով էր տեսել, շատերից քիչն ու ճշմարիտն է գետեղել: Ըստ որում, նա ավելացնում է, թե իր պատմության մեջ խոսել է նաև օտար տոհմերի ու վաղուց անցած-գնացած հիշատակների մասին: Եվ քանի որ պատմությունը վերաբերում էր Միսական աշխարհին, «որին ի վերջո տեր և իշխող դարձան Օրբելյան տոհմի որդիները, ուստի և հարկ ունեցա սրանց մասին նս պատմել»⁸:

Սեն-Մարտենի հրապարակման մեջ ԿԶ գլուխը բաժանված է ինը տարբեր մասերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին խորագիրը:

Հավանաբար, Սեն-Մարտենի ձեռքի տակ եղած բնագրում ԿԶ գլուխը գրիչների ձեռքով բաժանվել է առանձին փոքրածավալ գլուխների և նրանց համար նշանակվել են վերնագրեր՝ ելնելով բաժանված մասերի բովանդակությունից: Այսպես, օրինակ, Օրբելյանի երկի ամբողջական բնագրում շարադրանքի մեջ ԿԶ գլխում կարդում ենք. «Բայց ինքը՝ Գեորգին, ուրիշ թագածառանգ չունեք, բացի միայն Թամար անունով մի դուստրից, և վախճանվեց վեց հարյուր երեսուներեք թվականին: Թագավորությունն ստանձնեց այդ դուստրը: Նրա համար ամուսին բերեցին ռուսաց թագավորի որդուն, որի անունը Գեորգի էր»⁹: Այս հատվածի մի մասը Սեն-Մարտենի հրատարակածի Դ գլխի վերջն է, իսկ «Թագավորությունը ստանձնեց այդ դուստրը»՝ Ե գլխի սկիզբը: Այս գլխի ֆրանսերեն թարգմանության խորագիրն է՝ «Յաղագս, թե՛ զհարդ Թամար՝ դուստր թագաւորին Վրաց Գեորգէի թագաւորէ, և թէ որպէս ի խնդիր տոհմին Օրբելեանց լինի և ի գտանիլն մանկան միոյ Լիպարիտ անուն, այնու անդրէն զօրացեալ Օրբելեանքն հաստատեցան: Նաև այլ բանք և գրոյցք այլոց գործոց»: Ե գլխի սկզբնամասն է՝ «Իսկ զկնի Գեորգէի, իբրև թագաւորեաց Թամար

⁶ Ս տ է փ ա ն ո ս Օ Ր Բ Է Լ Ե Ա ն. Մյունիքի պատմություն (այսուհետև՝ Ս տ է փ ա ն ո ս Օ Ր Բ Է Լ Ե Ա ն), թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 61:

⁷ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 56:

⁸ Ս տ է փ ա ն ո ս Օ Ր Բ Է Լ Ե Ա ն. էջ 343:

⁹ Նույն տեղում, էջ 315–316:

դուստր նորին, էառ ինքեան այր գորդի թագաւորին *Ըռուսաց*, որոյ անուն էր *Գէորգէ*¹⁰:

Սեն-Մարտենի Օրբեյանի պատմության թարգմանությունը հիանալի պատկերացում է տալիս, թե ինչ փոփոխությունների են ենթարկվել միջնադարի պատմական ու գրական հուշարձանները, որոնք սերնդեսերունդ փոխանցվել են գրիչների արտագրությամբ և հաճախ էլ անանուն հեղինակների խմբագրմամբ:

Օրբեյանի պատմության նախաբան-կենսագրականում, քննախոսության և թարգմանության վերջում դրված ընդարձակ ծանոթագրություններում հայագետը լայնորեն օգտագործել է հայկական, վրացական, բյուզանդական, արաբական, ասորական ու այլ աղբյուրներ, որոնք ներկայացվում են շարունակական համադրությամբ: Նա փորձում է ներկայացնել Ստ. Օրբեյանի ճշգրտված կենսագրությունը: Ստ. Օրբեյանը, որը կոչվել է նաև Ստեփանոս Ուռայեյան Մյունեցի, ծնվել է Մյունիքի տանուտերեր Օրբեյանների ընտանիքում: Հայր Գայանոսը, որը մեծ ջանքեր էր գործադրում հայ եկեղեցին հռոմեականին միացնելու համար, Օրբեյանին շփոթել է VIII դ. նշանավոր եկեղեցական գործիչ Ստեփանոս Մյունեցու հետ¹¹:

Ստեփանոս Օրբեյանը եղել է Հայոց եկեղեցու կրոնական անկախության ջատագովներից և ամենաեռանդուն հակառակորդներից այն հայ հոգևորականների դեմ, որոնք ուզում էին մեր եկեղեցին միավորել կա՛մ հույների, կա՛մ հռոմեացիների հետ:

Սեն-Մարտենը անհայտ է համարում Ստեփանոս Օրբեյանի ծննդյան թվականը: Նա ծնվել է մեր թվարկության XIII դարի առաջին կեսին, Մյունիք գավառում, որի հոգևոր առաջնորդն էր դառնալու մի օր»¹²:

Ստ. Օրբեյանը Մյունիքի մեծ իշխան Սմբատի եղբայրը և Որոտն բերդի տեր Տարասայիճ Օրբեյանի երկրորդ որդին էր: Նրա մայրը Մյունիքում ապրող մահմեդական էմիրի դուստր Արուզ խաթունն էր, որը Տարասայիճի հետ ամուսնանալուց հետո կնքվել է և դարձել քրիստոնյա: Դեռ մանկուց հայրը՝ Տարասայիճը, Ստեփանոսին նախապատրաստել է հոգևոր բարձր կոչման: Եվ 1280-ին Վայոց ձորի Նորավանքում հավաքելով եպիսկոպոսների, վարդապետների ու վանահայրերի՝ որդուն մեծ հանդիսությամբ օծում է քահանա: Հինգ տարի հետո Մյունիքի հովվապետը վախճանվում է: Տարասայիճը, որն արդեն Մյունիքի իշխանաց իշխանն էր, որդուն ուղարկում է Եփրատի ափին՝ Հռոմկլայում¹³ նստող Հայոց կաթողիկոսի մոտ, որպեսզի նրան օծի Մյունիքի հովվապետի թափուր պաշտոնում: Լևոն Երրորդ արքան¹⁴ Ստ. Օրբեյանին ընդու-

¹⁰ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 100:

¹¹ Նույն տեղում, էջ 2:

¹² Նույն տեղում, էջ 2 (“Il naquit vers le milieu du XIIIe siecle de notre ère, dans la province de Siouni, dont il devoit être un jour le chef spiritual”):

¹³ 201 Օ թ. Կիլիկիայում տեսել ենք Հռոմկլայի կաթողիկոսական նստավայրի ավերակները, որոնք այսօր էլ դեռ պահպանում են իրենց ճարտարապետական փառահեղությունը:

¹⁴ Լևոն Երրորդի մասին Ստ. Պալասանյանը գրում է. «Լևոն Երրորդը (1270–1289) Լևոն յուր թագավորության վերջին տարիները յուր ազգի բարոյական և նյութական վիճակի վրա հոգալով անցկացրեց, առանձին խնամք տանելով յուր հիմնած դպրոցների ու հիվանդանոցների վրա, ինչպես նաև երկրագործության ու վաճառականության բարգավաճման վրա: Ուշադրության արժանի է, որ Լևոն Գ օրինակել տվեց հայկական գրականության նշան ավոր արդյունքները և

նում է մեծ սիրով և նույնիսկ փորձում է նրան օժել տալ կաթողիկոս, քանի որ վախճանվել էր Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ա Կլայեցին¹⁵: Ի վերջո, կաթողիկոս է ընտրվում Կոստանդին Երկրորդը և հաջորդ օրը Ջատկի տոնին ձեռնադրում է Ստեփանոս Օրբելյանին. «Եւ ի յաջորդ ատուր ի տօնի գատկին՝ ձեռնադրեաց սա ինքն Կոստանդին զՍտեփաննոս Ուոպելեան՝ արքեպիսկոպոս Սիւնեաց ըստ խնդրոյ հօր նորա Տարսայիճայ և Լևոն դարձոյց զնա ի Սիւնիս»¹⁶:

Սեն-Մարտենն իր «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» երկի երկու հատորներում էլ լայնորեն օգտագործել է Սիքայել Չամչյանցի «Պատմություն Հայոց» երկի երեք հատորները, որոնք ներկայացնում են Հայաստանի պատմությունը սկզբից մինչև 1784 թվականը:

XIII դ. երկրորդ կեսին Սյունիքի հովվապետը կամ մետրոպոլիտը Հայաստանում ուներ շատ բարձր դիրք և նստում էր Տաթևի վանքում: Ըստ ավանդության, Տաթևի վանքում էին պահված Հիսուս Քրիստոսի 72 աշակերտներից մեկի՝ Եվստաթեսոսի մասունքները, որի համար այդ վանքը կոչվել է նաև «Ս. Եվստաթեսոս առաքյալի ուխտ»¹⁷:

Ինչպես երևում է պատմությունից, Ստ. Օրբելյանը եղել է եռանդուն հոգևոր գործիչ, և նրա խստապահանջությունը հոգևորականների մոտ առաջացրել է դժգոհություններ: Ստեփանոսն ուներ Պարսկաստանի մոնղոլ տիրակալ Արղուն խանի աջակցությունը, որը նրա բարձր հոգևոր կոչումն արժանացրել էր յարլիկի: Ստ. Օրբելյանի և Կիլիկիայի հոգևորականության միջև հակասությունները հատկապես սրվում են Հիսուսի միաբնակ կամ երկբնակ լինելու խնդիրներում: Սեն-Մարտենը նկատում է, թե պատմիչի հայրենիք Հայաստանը երկար ժամանակ ավերվում էր հունական, վրացական, արաբական, պարսկական և թուրքական բանակների կողմից: Սյուս կողմից՝ հունական և հռոմեական քրիստոնեական եկեղեցիներն իրենց միարարական ձգտումներով քայքայում էին Կիլիկիայի հայոց թագավորությունը: Սեն-Մարտենը ներկայացնում է, թե ինչ դառնությամբ է այդ մասին խոսում Օրբելյանն իր գործերից մեկում. «Ահա տեսէք զի գեղեցիկ և փառաւոր անգամքն մերայն են, որ ախտացան սովին ախտիւս, և զլորեցան զանկանգնելի անկումս և զրկեցան ի մեծ շնորհաց որդւոյն Աստուծոյ: Կիլիկիա բոլոր, որ տեղի էր մեր պարծանաց, յայս իսկ վայր անկեալ կայ և զլիաւոր քաղաքք, որ ի Հռոմք ի տոյն մոլորեալ են, և հատաւ մինչև առ մեզ: Զի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն Տիխիս և հին տունն Բագրատունեացն յԱնի և ի Շիրակ նա և ի Դավրէժ Շահաստան, և յայլ բազում տեղիս: Ահա ո՛ր մնաց Հայոց ի հայրենի աւանդութեանս. միայն սինլքորք յանկեան ուրեք: Աւաղ և եղուկ է զիս որոյ

զանազան տեղեր ցրեց ուսումնականների գործածության համար. նորան ենք պարտական, որ շատ հայ ձեռագրեր անկորուստ հասել են մինչև մեր օրերը (տե՛ս Ստ. Պ ա լ ա ս ա ն ե ա ն. Պատմություն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 509):

¹⁵ Հակոբ Կլայեցին Ամենայն Հայոց կաթողիկոս է եղել 1268–1286 թթ: Նա եռանդուն գործակցել է Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Երրորդի հետ, նպաստել հարևան իշխանությունների հետ խաղաղ հարաբերությունների պահպանմանը և հայ-եգիպտական հաշտության պայմանագրի կնքմանը (1282 թ.) (տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոսներ, խմբագրությամբ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 144):

¹⁶ Մ. Չ ա մ չ է ա ն ց. Պատմություն Հայոց, հ. III, Երևան, 1984, էջ 284:

¹⁷ Տե՛ս ,Քրիստոնյա Հայաստանե հանրագիտարան, Երևան, 2002, էջ 994:

ժամանակի եղաք սպասաւորք: Բովանդակ անգամօք խեղացաք ի պատուի-
րանաց տեառն»¹⁸:

Հայոց եկեղեցու անկախության և ինքնության հարցերի վերաբերյալ փաս-
տերը Սեն-Մարտենը քաղում է Կդեմես Գալանոսի¹⁹ և Միքայել Չամչյանցի²⁰
աշխատություններից:

Սեն-Մարտենը Ստ. Օրբելյանի մահվան թվականը համարում է 1904-ը.
«Սենք գիտենք միայն, որ նա մահացել է Հայոց թվականության 733-ին, 1304 Հ.
Ք. ծ. հ.: Նրան փոխարինել է իր զարմիկ Հովհաննեսը, որին ինքն էր մեծաց-
րել»²¹:

Հայագետին, բացի Ստեփանոս Օրբելյանի պատմությունից, հայտնի են ու-
րիշ երկու գործեր: Առաջինը նա անվանում է պոեմ, հետո կոչում «Ողբ», որը
նվիրված է Հայաստանի դժբախտություններին. այն շարադրել է 1299-ին, գրել
է իր բարեկամ ու գաղափարակից, նշանավոր վարդապետ և բանաստեղծ Խա-
չատուր Կեչառեցու խնդրանքով: Սեն-Մարտենը, օգտվելով Մ. Չամչյանցի
«Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ զետեղված Օրբելյանի «Ողբից», բե-
րում է Բաղաց թագավորությանը վերաբերող հետևյալ հատվածը.

Միւս ևս այլ մեզ ըզջահ լուցին,
Ի տան Բաղաց Միսականին.
Մմբատ սեպուհն այն մեծագգին,
Ի Հայկազանցն այն առաջին.
Աջոյ բազուկ Հայոց ազգին,
Բարձր և հզօր անպարտելին.
Թագաւորեալ թագ կապեցին,
Ուժգին և խրոխտ ընդդէմ չարին.
Աւուրք բազմօք ի յետ անցին,
Ընդ թագաւորս Բագրատունին.
Հարիւր և քսան ամբ յաւելին,
Վասն ամրութեան այնմ աշխարհին.
Որոց Սենեքարիմ վերջին,
Նան Գրիգոր որդի նորին.
Ապա և գայս ի բաց բարձին,
Ի ժամանակս Ելտրկուզին.
Ազգն այլասեռ և Պարսկային,
Որք հրով զաշխարհս տոչորեցին.
Ի վեց հարիւր մեր թուականին,

¹⁸ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 6-7:

¹⁹ Տե՛ս Կդեմեսու Գալանոսու Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ
եկեղեցւոյն Հռովմայ, հ. I, Հայերեն և լատիներեն, Հռոմ, 1650, հ. II, Հռոմ, 1658: Գիրքը լույս է տեսել
Հռոմում նաև 1690-ին:

²⁰ Մ. Չամչյանցի «Պատմութիւն Հայոց, հ. II, Երևան, 1984, էջ 492, 494, 499, 537, 538, 564 և
այլուր:

²¹ «Nous savons seulement qu'il mourut en l'en 753 de l'ère Arménienne, 1304 de J.C. Il eut pour
successeur son neveu Jean, fils de Libarid, qu'il avoit élevé lui même» (J. A. Saint-Martin. Նշվ.
աշխ., էջ 8):

Եւ տասն և հինգ յաւելուածին.
Ահա տոքա այսպէս անցին,
Բնաւին ի բաց եղծեալ զնացին²²:

Ստ. Օրբելյանի «Ողբը» յուրօրինակ Հայոց պատմություն և, որում հեղինակը ողբում է Մեծ Հայքի տարածքում եղած Հայոց թագավորությունների վերացումը՝ Արշակունիներ, Բագրատունիներ, Արծրունիներ, Աղվանքի, Սյունյաց թագավորություններ:

Մեն-Մարտենի գործունեության ժամանակներում հայ միջնադարյան գրականության շատ գործեր դեռևս հրատարակված չէին, ու նա Ստ. Օրբելյանի մեծածավալ «Ողբի» այս փոքրիկ հատվածով ուզում է ֆրանսիացի ընթերցողին գաղափար տալ հայ ոչ եկեղեցական քնարերգության մասին. «... հայ քնարերգության մասին գաղափար տալու համար» («... pour donner une idee de la poesie Armenienne»):

Բնականաբար, Մեն-Մարտենը ներկայացնում է, թե որտեղից է վերցրել Ստ. Օրբելյանի պատմության բնագիրը: Պատմությունը լույս է տեսել 1775-ին, Ներսես Մեծի վարքի հետ միասին: Հայագետը ներկայացնում է այս հրատարակության տիտղոսաթերթը. «Ce volume porte le titre de» («Այս հատորն ունի խորագիր «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց, արարեալ յումենէ ի Մեսրոպայ քահանայէ ի Հողոց գեղջէ՝ ի Վայոց ձորոյ, յաշխարհէն Սիւնեաց: Յամի տեառն 962: Նախ պատմելով զգալատենէն Օրբէլեանց: Եւ ապա զվարուց սրբոյն մեծին Ներսիսի: Նաև զքաջէն Մուշեղայ զսպարապետէն Հայոց: Ի լոյս ածեալ տպիրք և ծախիրք Եղիազարու Շամիրեան կոչեցելոյ՝ աշխատակցութեամբ Մովսէսի Բաղրամեան հրահանգչին իւրոյ...»²³:

Պարզորոշ երևում է, որ ձեռագրի կազմողը Ստ. Օրբելյանի պատմությունից ընտրել է միայն մի ոչ ծավալուն հատված կամ իր ձեռքի տակ ունեցել է հենց արդեն խիստ համառոտված տարբերակ: Մեն-Մարտենը շատ է փաստում, որ ձեռքի տակ չունի մեկ ուրիշ ձեռագրական տարբերակ, որը համեմատելի Մաղրասում տպագրվածի հետ: Նրան հայտնի է, որ Լակրոզի ձեռքին՝ Գերմանիայում, եղել է Օրբելյանի երկի մեկ այլ տարբերակ, և փաստը վերաբերում է 1717-ին²⁴: Այդ տարբերակից էլ Լակրոզը լատիներենով թարգմանել է մի հատված: Այն կոչվել է «Historia Satraparum Orbelensium, in majore Armenia Ո Մ Վ Վ. Lacrozio, Bayero transmissa»²⁵. Այս հրատարակմանը Մեն-Մարտենը ծանոթ է: Բնչպես երևում է հայագետներ Թեոֆիլ Բայերի ու Լակրոզի նամակագ-

²² Նույն տեղում, էջ 9: Ստ. Օրբելյանի այս ողբը կոչվում է Ռղբ ի դիմաց Ս. Կաթողիկէին: Քննական բնագիրը կազմել ենք մենք՝ հիմք ընդունելով Կարապետ Կոստանյանցի կողմից 1885-ին Թիֆլիսում հրատարակված օրինակը, ինչպես նաև Մաշտոցի անվան Մատենադարանի - 8029, 9777, 2407, 2079, 3628, 3480, 1870 ձեռագրերում պահպանված ընդօրինակությունները: Հրատարակության մեջ հաշվի են առնված Ս. Արեղյանի դիտողությունները (տե՛ս Ս. Ա. Բ. է ղ յ ա ն. Երկեր, հ. 2, Երևան, 1970, էջ 269, Խ ա չ ա տ ու ռ Կ ե չ ա ռ ե ց ի. Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Դոլուխանյանի, Երևան, 1988, էջ 82-105):

²³ Այս հրատարակության մանրամասները տե՛ս Ն. Ո ս կ ա ն յ ա ն, Բ. Կ ո թ կ ո ս յ ա ն, Ա. Ս ա վ ա լ յ ա ն. Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 502-503:

²⁴ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 11:

²⁵ Նույն տեղում, էջ 13:

րությունից, նրանք ձեռքի տակ ունեցել են Ստ. Օրբեյանի պատմության առավել ամբողջական բնագիրը, որին մեծ կարևորություն են տվել:

Իր նախաբանի վերջում Սեն-Մարտենը եզրահանգում է, թե ինքը Արևելքի մատենագրության սիրահարներին ծառայություն է մատուցում՝ ներկայացնելով այս բնագիրը, որն իր կարծիքով հնարավորինս ճշգրտված է, և կցում է նրա ամբողջական թարգմանությունը. «Մա առաջին ամբողջական հայերեն բնագիրն է՝ տպագրված Ֆրանսիայում, որին կցված է ֆրանսերեն թարգմանությունը»²⁶:

Իր «Քննախոսության» մեջ Սեն-Մարտենը մանրամասնորեն խոսում է Օրբեյան ընտանիքի ծագման, Չինաստանից Վրաստան, ապա Հայաստան տեղափոխվելու մասին: Մեծապես օգտագործվում են ոչ միայն հայկական, այլև չինական, արաբական, լատինական, բյուզանդական և այլ աղբյուրներ: Նրա կարծիքով մինչև Մարկո Պոլոյի Չինաստան հասնելը, այդ երկրի հետ կապը եղել է դարեր առաջ, և չինական մետաքսը անտիկ աշխարհում հասնում էր մինչև Հռոմ: Տարբեր երկրների վաղնջական կապի վերաբերյալ Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Ումբերտո Էկոն ներկայացնում է այսպիսի հետաքրքիր դիտարկում. «Գիռչերը»²⁷ համոզված պնդում է, թե չինական իմաստությունը երկիր է բերվել Նոյի երրորդ որդու՝ Քամի շնորհիվ, որը Եգիպտոսում դարձավ փարավոն, հիմնադիրը կռապաշտության ու մոգության (հենց դրանով էլ նույնացել է Ջրադաշտի²⁸ հետ), որի խորհրդականը եղել է Հերմես Եռամեծն անձամբ: Քամին իր մարդկանց առաջնորդել է Պարսկաստանով դեպի Բակտրիա և վեր դեպի Մոգորի երկիր, և այնտեղից էլ եգիպտական իմացությունն անցել է Չինաստան: Այսպես Գիռչերը մեկնաբանում է Կոնֆիցիուսի²⁹ փիլիսոփայությունը որպես չինական տարբերակ Հերմես Եռամեծի ուսմունքի»³⁰:

Չինաստանի մասին հաղորդող ամենահին հայ հեղինակներից է Մովսես Խորենացին, որը չինացիներին անվանում է «խաղաղասեր գոլ զագգո Ճենաց»³¹: Ե՛վ Խորենացին, և՛ Բուզանդը Մամիկոնյանների ծագումը կապում են Չինաստանի հետ: Ահա թե ինչ է ասում Պապ թագավորը Մուշեղ Մամիկոնյանի մասին. «Զի այր՝ որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր, և թողեալ նախնեացն դորա զթագաւորութիւնն Ճենաց աշ-

²⁶ Նույն տեղում, էջ 14:

²⁷ Ս. Գիռչեր – գերմանացի արևելագետ, գիտնական (1601–1680), որը փորձել է մեկնաբանել հիերոգլիֆները (Տե՛ս Umberto E. Serendipities, San Diego, New York, London, 1999, p. 66):

²⁸ Ջրադաշտ – հին պարսիկների կրոնի հիմնադիրը (VIII դ. մ. թ. ա.), նրա ուսմունքի մասին տե՛ս Ե գ ն ի կ Կ ո ն դ ր ա գ ի. Եղծ աղանդոց, Երևան, 1970, գիրք II:

²⁹ Կոնֆուցիուս (551–479 մ. թ. ա.) – չինական իմաստուն, Չինաստանի պետական կրոնի հիմնադիրը:

³⁰ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 22:

³¹ Մ ո վ ս է ս Խ ո ռ Ե ն ա գ ի. Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և Ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 222–223:

խարհին, եկաք առ մեզ նախնիքն՝ ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք և մեռեալք են, և հայր սորա ի վերայ հօրն իմոյ մեռաւ...»³²:

Մեն-Մարտենը նշում է, թե, ըստ մեր պատմիչների, մեր թվականության առաջին դարի վերջին Phantchao անունով գորավարն իր բանակները հասցրել է մինչև Կասպից ծով: Չինացիներն այդ ժամանակ կապեր են ունեցել նաև հռոմեական կայսրության հետ, և մի պատվիրակություն Մարկուս Ավրելիոսի ժամանակ (166 թ.) հանդիպել է նրան³³: Երկար էջերով Մեն-Մարտենը խոսում է չինական հնագույն պետության, Արևելքի ու Արևմուտքի հետ նրա ունեցած կապերի մասին և փաստում, թե Չինաստանի պետությունը միշտ ունեցել է չափազանց մեծ տարածք («...le empire Chinois eut toujours une fort grande etendue»)³⁴: Միաժամանակ նշվում է, թե շատ քիչ թվով մարդիկ էին հասնում Չինաստան: Հայազետը գրում է, թե Արևմուտքում մշտապես մեծ գործածության մեջ էին մետաքսե զգեստները, որոնք հնարավոր չէր հայթայթել մեկ այլ վայրից, եթե ոչ Չինաստանից:

Ներկայացնելով Չինաստանին վերաբերող փաստերը՝ Մեն-Մարտենը ապացուցված է համարում հռոմեացիների և հույների ծանոթությունը չինացիներին: Այսօրինակ փաստերը հայազետն արձանագրում է Օրբելյանների Չինաստանից եկած լինելը հաստատելու համար:

Ն. Ադոնցը «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության մեջ Մամիկոնյանների և Օրբելյանների տոհմական ծագումը բոլորովին էլ չի կապում Փավստոս Բուզանդի ու նրա հետևողությամբ Մովսես Խորենացու հաղորդած Չինաստանի հետ: Ադոնցը կրկնում է հայկական ավանդույթը, ըստ որի «Մամիկոնյանների ենթադրյալ նախահայրերը՝ Մամիկը և Կոնակը, ... Չինաստանում թագավորից հետո ամենանշանավոր իշխանի որդիներն էին: Այդ իշխանի մահից հետո թագավորը ամուսնանում է նրա այրու հետ և նրանից ունենում է մի որդի Ճենթակուր անունով, որը և պետք է ժառանգեր գահը: Նույն մորից ծնված նրա եղբայրները՝ Մամիկը և Կոնակը, դավադրություն են նյութում, որպեսզի տիրեն գահին: Դավադրությունը չի հաջողվում, և նրանք փախչում են Բալխ, ապաստանում Արշակունի թագավորի մոտ: Ճենթակուրը պահանջում է փախստականներին իր ձեռքը հանձնել, բայց Արշակունին մերժում է՝ նրան հանգստացնելով, թե «փախստականներին կողարկի հեռու արևմուտք, աշխարհի ծայրը, ուր մայր է մտնում արևը»: Եվ իսկապես, Ճենթա-

³² Փավստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց, Բնագիրը Զ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 304, 306:

³³ Մարկուս Ավրելիոս Անտոնինոս (121–180) – ստոիկ փիլիսոփա, Հռոմի կայսր (162–180): Նրա կառավարման տարիներին Հռոմը բազմաթիվ ծանր ու հաղթական պատերազմներ է մղել պարթևների ու գերման ցեղերի դեմ: Չնայած իր մարդասիրական մղումներին՝ Մարկուս Ավրելիոսը ոչինչ չի արել քրիստոնյաների վիճակը թթևացնելու համար: Կյանքի վերջում գրել է իր «Մտածումները», որով դասվում է անտիկ ժամանակների հետաքրքիր ստոիկ փիլիսոփաների շարքը (տե՛ս Petit Robert – 2, Paris, 1988, pp. 1145–1146):

³⁴ J. A. Saint - Martin. Նշվ. աշխ., էջ 35:

կուրի հետապնդումներից ազատելու նպատակով նրանց ուղարկում է Հայաստան՝ իր ազգակից Արշակունու մոտ»³⁵:

Ադոնցը մերժում է այս տեսակետը և առաջ է քաշում իր վարկածը. Մամիկոնյանները ծագում են Մամիկոնյանների տոհմական կալվածքից ոչ հեռու ապրող հարևան ծաներից, որոնք այժի էին ընկնում իրենց արտասովոր քաջությամբ և նման չէին «հեզաբարո չինացիներին»³⁶: Հրնթացս Ադոնցը համոզված է, որ Օրբեյանները, որ իրենց համարում էին Մամիկոնյանների ժառանգներ, նույնպես Վրաստան են անցել Տայքից³⁷:

Մեն-Մարտենը նշում է, թե միակ վավերական փաստը, որը կարող է խանգարել Օրբեյանների Վրաստան գալը Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումից առաջ, այն է, որ այդ ժամանակահատվածում Չինաստան անունը գոյություն չունեի³⁸: Նա հիշեցնում է նաև, որ չինացիներն իրենց երկիրը, ազգային սովորության համաձայն, կոչում էին տիրող դինաստիայի անունով: Բերելով բազում փաստարկներ՝ հայազետը միաժամանակ Օրբեյանների ծագումը լրիվ բացահայտված չի համարում, և անցնում է Չինգիզ խանի ժամանակներին՝ հիշեցնելով, թե ինչպես մոնղոլական ցեղերը Չինաստանի հյուսիսից, Միրիայի հարավով հասել են մինչև Պարսկաստան ու անցել ավելի Արևմուտք: Քննախոսության եզրակացությունն այն է, որ Օրբեյանները, անտարակույս, Վրաստան են եկել վաղնջական ժամանակներում³⁹:

Շատ հարուստ են նաև Ստ. Օրբեյանի պատմության տասը գլուխներին նվիրված ծանոթագրությունները, որոնք հենվում են նորից վրացական, հայկական, բյուզանդական, արաբական, չինական և այլ սկզբնաղբյուրների վրա: Այդ ծանոթագրությունները բացատրում են Օրբեյանի երկում եղած տեղանունները, անձնանունները, հնագույն կրոնական պատկերացումները, պատմական նշանավոր անձերին, տիտղոսներն ու պաշտոնները, անհասկանալի բառերն ու եզրույթները: Բնականաբար, ծանոթագրությունների մեծ մասում առկա են Վրաստանի պատմության դրվագներ: Հատկապես լայնորեն օգտագործված է Վախթանգի պատմությունը: Հայկական աղբյուրների մեջ առկա է նաև Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը», որում արժեքավոր փաստեր կան թուրք-սելջուկների Հայաստան կատարած արշավանքների մասին: Նշանավոր բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» առաջաբանում գրում է. «Ֆրանսիացի հայտնի հայագետ Մեն-Մարտենը 1811 թ. բյուզանդագետների ուշադրությունը հրավիրեց Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ հանդիպող Չնշկիկի՝ Աշոտ Գ-ին ուղարկած նամակի վրա՝ տալով նրա ֆրանսերեն թարգմանությունը, որը հայերեն բնագրի հետ համեմատել և ծանոթացրել էր Շահան Ջրպետը»⁴⁰:

³⁵ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 447-448:

³⁶ Նույն տեղում, էջ 448:

³⁷ Նույն տեղում, էջ 449:

³⁸ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 48:

³⁹ Նույն տեղում, էջ 53:

⁴⁰ Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ XXIV-XXV:

Մեն-Մարտենը նշում է, թե Մատթեոս Եղեսացին թուրք-սելջուկների արշավանքը Հայաստան դնում է 1049 թվականին, մինչդեռ արաբ պատմիչ Իբն ալ-Աթիրը նույն արշավանքի թվականը համարում է երկուսը՝ 1048 կամ 1049: Հ. Բարթիկյանը շատ հետաքրքիր փաստեր է հաղորդել այդ շրջանի Եղեսիայի⁴¹ մասին: Ըստ արաբ պատմիչի՝ «Հայկական բնակչությունը Եղեսիա – Ուռ-հայում ժամանակի ընթացքում էլ ավելի ստվարացավ, և Ուռհայեցու օրոք այն արդեն հայաքաղաք էր: Այդ մասին են վկայում ոչ միայն հայկական, այլև արաբական աղբյուրները: Իբն ալ-Աթիրի ասելով քաղաքն ամբողջությամբ հայերով էր բնակեցված: Ելնելով քաղաքի բնակչության էթնիկական պատկանելությունից՝ սկզբում Բյուզանդիան, ապա նաև սելջուկները ստիպված էին Եղեսիայի քաղաքազլխի – դուկի պաշտոնը հայերին տալ»⁴²:

Օգտվելով Մ. Չամչյանցի «Պատմություն Հայոց» աշխատության երկրորդ հատորից՝ Մեն-Մարտենը ներկայացնում է, թե հայերի ինչ նախճիր են կազմակերպում Թուրքիլ սուլթանի հրոսակները՝ անմեղ բնակիչներին սպանելով ու գերեվարելով: Այդ հատվածի հիմքը, ինչպես վկայում է Չամչյանցը, Արիստակես Լաստիվերցու պատմությունն է: Թուրք մարդասպաններից մազապուրծ փախածները բարձրանում են Սմբատաբերդ, սակայն ընկնում են թշնամու մահասփյուռ սրից⁴³:

Ծանոթագրություններում մեծ թիվ են կազմում համեմատությունները Լակրոզի հրատարակության մեկնարանությունների հետ:

Մեն-Մարտենը բացատրում է բազմաթիվ բառեր, որոնք հանդիպում են Ստ. Օրբելյանի պատմության մեջ և որոնք պետք է լիովին հասկանալի լինեն ֆրանսալեզու ընթերցողին: Ահա որոշ օրինակներ.

Դարպաս – նշանակում է պալատ, արքունիք:

Ամիր Սպասալար – սպարապետ:

Յառլիկ – իրավունք: Յառլիկի մասին Ստ. Օրբելյանը գրում է. «Եվ նրան (խոսքը Սմբատ Օրբելյանի մասին է – Ա. Դ.) տվեցին ոսկե փայիզա, որը տախտակ էր՝ վրան գրված աստծու և արքայի անունները: Սա նրանց մեծագույն պարգևն էր: Գրում են յառլեխ, այսինքն՝ հրաման, որ մենք սիգել ենք կոչում, և նրան են տալիս Ասլանի կողմից թրով նվաճած հողերն ու Որոտանը՝ իր գավառով, որ գտնվում էր Բալուխ ու իր մեծամեծների բաժնում, Բորոտնա բերդը՝ իր եկամուտներով, այնտեղ սպանված նրա հայր Լիպարիտի համար՝ որպես արյան գին: Սմբատի անունը դուրս է հանում վրացական և ուրիշ հարկային բոլոր մատյաններից»⁴⁴:

Վազիր – օտար բառ հայերենում, հայազետն այն բացատրում է որպես հրամանատար:

Մեն-Մարտենը «ի մեծ դիւան արքունի» արտահայտությունը ֆրանսերենով թարգմանում է «au grand divan royal» և ավելացնում, թե մոնղոլական տիրապետությունը Պարսկաստանում որպես մայրաքաղաք ուներ Թավրիզը:

⁴¹ 2010 թ. եղել ենք Եղեսիայում: Այն լի է քրիստոնեական սրբավայրերով, որոնք կապվում են Հոր Երանելու, Աբրահամ նահապետի և այլոց հետ:

⁴² Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե ց ի. Ժամանակագրություն, էջ IV:

⁴³ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 208:

⁴⁴ Մ տ է փ ա ն ո ս Օրբելյան, էջ 328:

Հայագետը նշում է, թե ոչ մի այլ պատմիչ Ստ. Օրբելյանից բացի չի անդրադարձել մոնղոլների կողմից Երուսաղեմի գրավելու իրողությանը: Նա համոզված է, որ անհնար է, որ այդ գրավումը տեղի ունեցած չլիներ⁴⁵:

Ծանոթագրություններում բավական հաճախ է հիշատակվում Արդուն խանը: Խոսվում է նաև պատմական այն դեպքի մասին, որ Արդունի պալատականներից էր Բուդան, ու նա դավադրություն է պատրաստում Արշակի դեմ, որը, ըստ Օրբելյանի, «աստվածադիր» թագավոր էր: Արդուն խանի և Բուդայի մասին XIII դ. նշանավոր բանաստեղծ Ֆրիկը ունի խիստ ուշագրավ քերթված, որում կարդում ենք.

Բուդա՛, դու ո՞նց կամիր նենգել,
 Աստուածադիր թագաւորին, –
 Ձոր քրիստոնէայքն ամէն հաւսար,
 Ի յաստուծոյ կու խնդրէին:
 Բուդա էիր չինքսան եղար,
 Բէկլար – բէկի՛ իր հեծելին,
 Չգիտեմ թէ զի՞նչ կամիր լինել,
 Դու չիր որդին Չանկըզ դանին⁴⁶:

Ստ. Օրբելյանը գրում է. «Այդ ժամանակ Արդուն դանի գորքերը պառակտվեցին. մեծ շփոթություն առաջացավ գլխավոր գորավարների ու այլ պաշտոնյաների միջև: Մեծ արյունահեղություն եղավ: Արդունը բռնեց ավագաց ավագ կամ տերանց տեր կոչված Բուդա չինքսան գորապետին ու սպանեց՝ իր դեմ դավադրություն կազմակերպելու մտադրության պատճառով»⁴⁷:

Այս պատմական դեպքը Մեն-Մարտենը ծանոթագրում է հետևյալ կերպ: Բերենք գրաբար բնագրի այս հատվածի մի մասը. «Ձի կալաւ Արդունն զմեծ զորապետն զԲուդային քսանն՝ որ կոչի աւագաց աւագ, կամ տէր տերանց, և էսպան զնա. զի խորհուրդ նենգութեան էին խորհել նմա»: Մեն-Մարտենը իրավացիորեն Բուդային քսան ուղղել է որպես Բուդա Չինքսան: «Չինքսան» բառը նրա կարծիքով նշանակում է մինիստր: Նա գրում է. «Արդունի գահակալության սկզբում Բուդան եղել է պետության մեջ առաջինը, բոլոր հնարավորությունները նրա ձեռքին էին, նա դրանով սկսել է խարդավել այն աստիճան, որ իր դեմ լարեց բոլոր մեծամեծներին, որոնք միաբանվեցին նրա դեմ, ամբաստանեցին նրան, և հասան նրան սպանելուն: Նա սպանվեց 1289 թվականի հունվարի 16-ին՝ ըստ Ռաշիդ – Էդդինի»⁴⁸:

Մ. Աբելյանը «Վասն Արդուն դանին և Բուդային» քերթվածը համարում է Ֆրիկի լավագույն գործերից մեկը, և վերջինիս պատմականությունը գնահատում է հետևյալ կերպ. «Պատմական դիպվածն է 1289 թ. Արդուն դանի դեմ լարված դավադրությունը, որ չի հաջողվել, կոտորվել են դավադիրները: ... Ֆրիկի համակրությունն էլ բնականաբար եղել է Արդունի կողմը և ոչ 1289 թ. նրա դեմ դավադրություն սարքողների, որոնց պարագլուխն էր Բուդան: Նա

⁴⁵ J. A. Saint - Martin. Նշվ. աշխ., էջ 275:

⁴⁶ Ֆրիկի կ. Տադեր, Երևան, 1982, էջ 73:

⁴⁷ Մտեփաննու Օրբելյան, էջ 341:

⁴⁸ J. A. Saint - Martin. Նշվ. աշխ., էջ 299:

քերթվածի սկզբում փառք տալով «արդար ու իրաւ դատավորե աստծուն՝ բացականչում է և բացադիմում սպանված դավադիր Բուդային: ...Արդուն դանն էր Բուդային «վեր քաշել» և ամեն բարիք տվել, մեծացրել այն աստիճանի, որ նա Արդունից պակաս չէր, – ասում է Ֆրիկը, – կամ, ինչպես Օրբեյանը գրում է, եղել էր «չինքսան», այսինքն «աւագաց աւագ»: Իր ստացած բարիքների փոխարեն՝ Բուդան կամեցել է Արդունին սպանելով ինքը դառնալ թագավոր, բայց այդ, – ասում է Ֆրիկը, – նրան տրված չէր ի վերուստ»⁴⁹: Թե՛ Ստ. Օրբեյանի պատմության և թե՛ Մեն-Մարտենի ծանոթագրություններում կրկնվում է նույնը, ինչ որ կա Ֆրիկի վերոհիշյալ բանքում: Սա կարևոր փաստ է, և նշանավորում է այն արթուն ուշադրությունը, որ բանաստեղծ Ֆրիկն ունեցել է իր ապրած ժամանակի քաղաքական ու տնտեսական կյանքի նկատմամբ:

Մեն-Մարտենի «Հիշատակարանների» երկրորդ հատորի թե՛ առաջաբանում և թե՛ ծանոթագրություններում Ստ. Օրբեյանը ներկայացված է որպես իր հայրենիքին անմնացորդ նվիրված մատենագիր, հոգևոր առաջնորդ և քաղաքական գործիչ: Պատահական չէ, որ մեծ պատմաբան Ն. Ադոնցը հատուկ համակրանքով է ներկայացնում այդ մատենագրին և գնահատում որպես սկզբունքային ու խիզախ գործիչ: «Պետք է ունենալ Ստեփանոս Օրբեյանի գաղափարական քաջությունը»⁵⁰, – գրում է նա:

Այժմ՝ տարիների հեռվից առավել է արժևորվում Մեն-Մարտենի կատարածը: Նա խիստ կարևորում է Ստեփանոս Օրբեյանի մատյանը, որպես Ասիայի՝ հատկապես մոնղոլների պատմությունն ուսումնասիրելու աղբյուր և համոզված է, թե իր կատարածը մի իսկական նվեր է արևելյան գրականության սիրահարներին⁵¹:

Մեն-Մարտենի հարցադրումները զարգացնում ու հիմնավորում է նրա արժանավոր աշակերտն ու հետևորդը՝ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, որը ոչ միայն ֆրանսերենով հրատարակում է պատմիչի երկի ամբողջական բնագիրը առանձին հատորով⁵², այլև մի երկրորդ ստվար հատոր էլ նվիրում է պատմության գիտահետազոտական խնդիրներին⁵³:

⁴⁹ Մ. Արեղյան. նշվ. աշխ., հ. Դ, էջ 260–261:

⁵⁰ Ն. Ադոնց. Երկեր, Բ, Երևան, 2006, էջ 499:

⁵¹ J. A. Saint-Martin. Նշվ. աշխ., էջ 14:

⁵² Histoire de la Siouni par Stéphannos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset première livraison, Histoire de la Siouni, SPb, 1864.

⁵³ M. Brosset. Stéphannos Orbélian, Histoire de la Siouni, Introduction, t. II, SPb, 1864.

ПЕРВЫЙ ФРАНЦУЗСКИЙ ПЕРЕВОД ИСТОРИИ
СТЕПАНОСА ОРБЕЛЯНА

АЭЛИТА ДОЛУХАНЫАН

Резюме

Второй том труда «Исторические и географические записи об Армении» Ж. А. Сен-Мартена в основном посвящен анализу Истории Степаноса Орбеляна и параллельному изданию ее древнеармянского текста с его французским переводом. По прошествии многих лет сделанное Сен-Мартеном приобретает еще большую ценность. Он считал, что труд Степаноса Орбеляна имеет огромное значение для изучения истории Азии и, в частности, истории монголов. Сен-Мартен убежден, что сделанный им перевод – настоящий подарок любителям восточной литературы. Вопросы, поставленные Сен-Мартеном, были обоснованы его достойным учеником и последователем Мари Фелисите Броссе, который не только издал отдельной книгой весь текст произведения историка на французском языке, но и посвятил второй объемистый том научно-исследовательским вопросам Истории.

THE FIRST FRENCH TRANSLATION OF THE HISTORY
BY STEPANOS ORBELIAN

AELITA DOLUKHANYAN

Summary

The main part of the second volume of the Historical and Geographical Memoirs about Armenia by J. A. Saint-Martin consists of the analysis of the History by Stepanos Orbelian and the parallel edition of its text in ancient Armenian with its French translation.

Saint-Martin's works seem even more valuable after the lapse of many years. He thinks that the work of Stepanos Orbelian is of great importance as a source for the study of the history of Asia, and especially the history of the Mongols. Saint-Martin is convinced that the translation he had done is a true present to the amateurs of eastern literature.

Questions raised by Saint-Martin were substantiated by his remarkable pupil and disciple Marie Félicité Brosset who not only published in a special volume the entire original text of the historian's work in French, but devoted another bulky volume to the scientific issues of the *History*.